




«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 05 » 06 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Լ. Թունյան

N ԳԲԽ 16/14 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից 19.05.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգին

«ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է գնման հայտ և առաջարկել է աշխատանքների կատարման համար նվազագույն գնային առաջարկ՝ 122.032.463 (հարյուր քսաներկու միլիոն երեսուներկու հազար չորս հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից՝ 20.338.744 (քսան միլիոն երեք հարյուր երեսունույթ հազար յոթ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամը ԱԱՀ-ն: «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 12-ին կայացած նիստի N 3 արձանագրությամբ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով, որ Ընկերության կողմից ներկայացված հայտը չի համապատասխանել բաց ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին: Սակայն «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախորդ երեք տարիների ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքները բավարարում են բաց ընթացակարգի հրավերով ներկայացված պահանջներին, քանի որ ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 85-րդ կետի համաձայն՝ «Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները՝ ըստ ոլորտների: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշման 85-րդ կետով սահմանված պահանջները:

Ընկերության բողոքը և պահանջը կայանում է նրանում, որ «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչեր «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ին, սակայն կայացրել է որոշում, որը չի համապատասխանում գնումների մասն ՀՀ օրենսդրության պահանջներին:

«ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն խնդրել է բողոքարկման խորհրդին դադարեցնել «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 12-ի որոշումը:

2. «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.05.2014թ. N 04/032-921 գրությամբ դիմել է «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Պատվիրատու)՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 19.05.2014թ. «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը 26.05.2014թ. N 01-04/37 գրությամբ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 3-րդ հարկի վերազինման և հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգը կազմակերպվել է ՄԱԿ-ի հանցագործությունների և արդարադատության հարցերով գիտահետազոտական ինստիտուտի կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում՝ նպատակ ունենալով վերանորոգել և վերակառուցել «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հատուկ վտանգավոր ախտաճիւններով զբաղվող լաբորատորիան՝ կենսաանվտանգության և

կենսաապահովության ստանդարտներին համապատասխան: Այդ առումով, հիմք ընդունելով ծրագրի փաստաթղթում նշված նպատակները՝ ընթացակարգի հրավերի փաստաթղթերում «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նշվել է նմանատիպ աշխատանքների փորձ ունենալու անհրաժեշտությունը, քանի որ հայտը կազմելու և գնային առաջարկի հաշվարկման ժամանակ մասնակիցը պետք է պատկերացնի և ունենա համապատասխան տեսական և գործնական գիտելիքներ և փորձ շինարարական օբյեկտի առանձնահատկությունների ու կատարող աշխատանքների սպեցիֆիկ ուղղվածության վերաբերյալ և նյութերի, սարքավորումների ընտրության ժամանակ հաշվի առնի այդ առանձնահատկությունները: Մասնավորապես, այդ առանձնահատկությունները կայանում են նրանում, որ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի լաբորատորիաներում աշխատանքները կատարվում են խիստ վտանգավոր կենսաբանական և քիմիական նյութերով, որոնք ուղղակի կամ անուղղակի շփման մեջ են գտնվում շինարարության ընթացքում օգտագործված նյութերի և սարքավորումների հետ և դրանց ոչ ճիշտ ընտրությունը և օգտագործումը կարող է վտանգ ներկայացնել ինչպես լաբորատոր աշխատակազմի առողջության համար, այնպես էլ պատճառ հանդիսանալ հիվանդության հարուցիչների արտաքին միջավայր արտազատմանը:

«ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից որպես նմանատիպ աշխատանքներ ներկայացվել են մսուր-մանկապարտեզի և կուլտուրայի տան վերանորոգման աշխատանքները, ինչը հանձնաժողովի կարծիքով չի կարող դիտվել որպես համանման, քանի որ այն մոտեցումները, նյութերը և սարքավորումները, որոնք կիրառվում են այդ տեսակի հանրային օբյեկտների շինարարությունում չեն կարող նմանատիպ կերպով օգտագործվել լաբորատորիաների պարագայում և ապահովել դրանց ներկայացվող կենսաանվտանգության և կենսաապահովության պահանջների բավարարումը:

Հանձնաժողովը «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար՝ հաշվի առնելով նմանատիպ աշխատանքների բացակայության փաստը, որի արդյունքում գնային առաջարկի հաշվարկը կատարվել է առանց լաբորատորիաների վերակառուցման և վերանորոգման տեղեկատվության հիման վրա և արդյունքում ստացվել է ծրագրի նախագծա-նախահաշվարկային գնին զգալիորեն զիջող գնային առաջարկ, որը սակայն բավականին ռիսկային է անհրաժեշտ որակի և

կենսաանվտանգության ստանդարտների համապատասխան լաբորատորիա վերակառուցելու տեսանկյունից:

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ն հայտնել է, որ ընթացակարգի մասնակիցների ներկայացված հայտերի գնահատման ժամանակ բացի գնային առաջարկներից չափազանց կարևոր նշանակություն ունի նաև նմանատիպ աշխատանքների իրականացման հետ կապված փորձառությունը, քանի որ շինարարության օբյեկտը ունի բազմաթիվ յուրահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն շինանարարության ժամանակ խուսափելու համար հետագա բարդություններից: «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը գտնում է, ավելի կարևոր է դառնում այն մասնակցի ընտրությունը, որն ունի համապատասխան փորձառություն և ունակ է իրականացնելու ծրագրի փաստաթղթում նշված կենսաանվտանգության և կենսաապահովության ստանդարտների համապատասխան լաբորատորիայի վերակառուցման և վերանորոգման աշխատանքները:

3. ԳԲԽ-16/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-16/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից 19.05.2013թ. ներկայացված բողոքը, «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.05.2014թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունը, «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացրած 26.05.2014թ. N 01-04/37 գրությունը և դրան կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 3-րդ հարկի վերազինման և հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն:

«ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգին «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է գնման հայտ և առաջարկել է աշխատանքների կատարման համար նվազագույն գնային առաջարկ՝ 122.032.463 (հարյուր քսաներկու միլիոն երեսուներկու հազար չորս հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից՝ 20.338.744 (քսան միլիոն երեք հարյուր երեսունույթ հազար յոթ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամը ԱԱՀ-ն: «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 12-ի կայացած նիստի N 3 արձանագրությամբ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով, որ Ընկերության կողմից ներկայացված հայտը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին: Սակայն «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախորդ երեք տարիների ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքները բավարարել են Ընթացակարգի հրավերով ներկայացված պահանջներին:

Պատվիրատուն Կենտրոնին ներկայացրած 26.05.2014թ. N 01-04/37 գրությամբ հայտնել է, որ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից որպես նմանատիպ աշխատանքներ ներկայացվել են մսուր-մանկապարտեզի և կուլտուրայի տան վերանորոգման աշխատանքները, ինչը գնահատող հանձնաժողովի կարծիքով չի կարող դիտվել որպես համանման, քանի որ այն մոտեցումները, նյութերը և սարքավորումները, որոնք կիրառվում են այդ տեսակի հանրային օբյեկտների շինարարությունում չեն կարող նմանատիպ կերպով օգտագործվել լաբորատորիաների պարագայում և ապահովել դրանց ներկայացվող կենսաանվտանգության և կենսաապահովության պահանջների

բավարարումը, հետևաբար չափազանց կարևոր նշանակություն ունի նմանատիպ աշխատանքների իրականացման հետ կապված փորձառությունը, քանի որ շինարարության օբյեկտն ունի բազմաթիվ յուրահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն շինանարարության ժամանակ խուսափելու համար հետագա բարդություններից:

Հանձնաժողովի՝ 12.05.2014թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4-րդ կետով որոշում է կայացվել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մերժել «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, քանի որ հայտը չի համապատասխանել բաց ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին:

«ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝

- Հրավերի հավելված N 2-ով ներկայացրել է բաց ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն, որով «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ ունի համապատասխան գործունեություն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա:

- Հրավերի հավելված N 3.1-ով, ներկայացրել է մասնագիտական գործունեության՝ պայմանագրով նախատեսված գործունեության համապատասխանության նախկինում կատարված պայմանագրերի մասին, որտեղ նշվել է, որ 2011 թվականի ընթացքում «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն իրականացրել է՝ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի հետ (Կոտայքի մարզի Նոր Հաճնի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքներ) 188.266.685 ՀՀ դրամ արժեքով և 2013թ. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ (Չարենցավանի «Հրաշք» մսուր-մանկապարտեզի մասնաշենքի վերակառուցման, ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ) 93.7087.20 ՀՀ դրամ արժեքով հիմնանորոգման և վերակառուցման շինարարական աշխատանքներ:

- Հրավերի հավելված N 3.2-ով ներկայացրել է մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, որով «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ բաց

ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է շենք-շինությունների հիմնանորոգման, վերակառուցման աշխատանքներ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 281.975.405 (երկու հարյուր ութսունմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր հինգ) ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն, պայմանագրով նախատեսված գործունեությանը և մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 80-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկայի ծավալը՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալների մասին տեղեկությունները,

2. Մասնակիցը համարվում է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Կարգի 81-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ)

առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե՝

ա) մինչև երեք հարյուր հիսուն միլիոն դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Ընդ որում, համակարգչային և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման դեպքում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է գնման առարկայի իսկությունը (մատակարարված կամ մատակարարվելիք) հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 85-րդ կետի համաձայն՝ Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները՝ ըստ ոլորտների: Հրավերով սահմանված՝ համանման համարվող

տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

ՀՀ կառավարության 02.07.2009թ. N 777-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» կարգի՝

- 5-րդ կետի համաձայն՝ անձը նույն կարգի 6-րդ կետով սահմանված ցանկացած ոլորտում կարող է զբաղվել շինարարության իրականացման գործունեությամբ, եթե նա ստացել է շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա և լիցենզիային կից համապատասխան ոլորտի աշխատանքներ իրականացնող պատասխանատու անձի (անձանց) լիցենզիայի ներդիր (ներդիրներ):

- 6-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի ներդիրները տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների՝

- 1) բնակելի, հասարակական և արտադրական.
- 2) տրանսպորտային.
- 3) հիդրոտեխնիկական.
- 4) էներգետիկ.
- 5) կապի:

Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել է, որ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

- Նախկինում կատարված պայմանագրերի առարկան, ծավալը՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները,

2. Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ

համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում էներգետիկական և հիդրոտեխնիկական, քաղաքաշինական, նմանատիպ հիմնանորոգման, այդ թվում կտուրի հիմնանորոգման աշխատանքները, նմանատիպ լաբորատորիայի, օրինակ կենսաբանական անվտանգության, կամ այլ նմանատիպ բնույթի լաբորատորիայի կառուցման կամ հիմնանորոգման աշխատանքների կատարումը:

Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Հրավերի 2-րդ մասի՝ «Բաց ընթացակարգի հայտը պատրաստելու» Հրահանգի 2.2.3 կետով սահմանվել է, որ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Գտնում ենք, որ Պատվիրատուն, մերժելով «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 85-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունները համապատասխանում են Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Կարգի 80-րդ և 81-րդ կետերով, ինչպես նաև Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետն՝ առաջարկում ենք «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի կողմից 19.05.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 3-րդ հարկի վերազինման և հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 12-ի ժամը 11:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4-րդ կետով «ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Պետի տեղակալ՝



Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Լ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-16/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար



Ռ. Մկրտչյան